

"Droschak"

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:

Rédaction du "Droschak"

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Վ Ե Ր Զ Ի Ն Հ Ե Ր Ո Ս Ա Կ Ա Ն Կ Ռ Ի Ի Ն Ե Ր Ո Ւ Մ

Ը Ն Կ Ա Մ Ք Ա Զ Ե Ր Ը

1. ԱՐԻՍՏԱԿԵՍ ԶՕՐԵԱՆ (ԿԱՐՕ), Գողթնի Ցղնա գիւղից, 26 տարեկ. Զինագործ:
2. ԿԱՐԱՊԵՏ ԳԱԽԹԵԱՆ (ԽԱՆ), Ղազարի Թօռլ գիւղից, 26 տարեկ. Արհեստաւոր:
3. ԱՍՏԻԱՄԱՏՈՒՐ ՄԻՐԱՅԵԱՆ, Ղզլարցի, 26 տարեկան: Խնթասպայ:
4. ԱՐՏԱՇԵՍ ԲԱՏԻԿԵԱՆ (ԵԳՈՐ), Նոր-Բայազիդցի, 24 տարեկան:
5. ՎԱՐԴԱՆ ՏԵՐ-ԳԱԽԹԵԱՆ (ԲԻԶԱ), Տիվրիկցի, 45 տարեկան:
6. ԳՐԻԳՈՐ ԼՈՌԵՅԵԱՆ (ՊԻՂԱՏՈՍ), Ալեքսանդրապօլցի, 24 տար. Արհեստաւոր:
7. ՕՀԱՆ ԼԱԹՈՅԵԱՆ (ԼՕՐԹՕ), Մուշի Վարդենիս գիւղից, 27 տարեկան:
8. ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Թիֆլիզցի: 22 տարեկան:
9. ԿԱՐԱՊԵՏ ՓԱՆՈՍԵԱՆ, (ԱՐՇԱԿ), Գողթնի Ցղնա գիւղից, 24 տար. Դերձակ:
10. ԳՐԻԳՈՐ ԱՍԼԱՆԵԱՆ, Վանեցի, 22 տարեկան:
11. ՍՏԵՓԱՆ ՆԱԶԱՐԵԹԵԱՆ, (ԻԻԱՆ), Ախալքալաքցի:
12. ՄԿՐՏԻՉ ՅԱԿՈԲԵԱՆ, Ղազարեցի, 25 տարեկան:
13. ԱՐՇԱԿ ՈՍԿԱՆԵԱՆ, Շուշայ գաւառի Շիրաւանյ-2-րդ գիւղից, 24 տար. Զինուոր:
14. ՍԱՐԳԻՍ ԵԱՂԱՆԵԱՆ, Ախլցխացի, 20 տարեկան:
15. ԽԱՉԻԿ ԱՐԻԱՅԱՍԵԱՆ, Վանի Կոռուրաշ գիւղից, 35 տարեկան:
16. ԱԶՕ ՔԵՍԵԱՆ, Շատախցի, 35 տարեկան:
17. ՍԱՂԱԹԷԼ ԶՕՀՐԱԲԵԱՆ, Հաճադանցի, 20 տարեկան:
18. ԽԱՉԻԿ ԽԻՋԱՆՑԻ, 35 տարեկան:
19. ԳԱՍՊԱՐ ՎԱՆԵՑԻ, 40 տարեկան:

Յարգա՞նք ձեզ, սրտի մարդիկ: Ձեր անհնչապա՞ծ դիակները առջեւ խոնարհու՞մ ենք մեր զուգնիւրը . . . Մի սիրտ ունէ՞իք, այն էլ զո՞ր բերիք ժողովրդի ազատութեան Ս. Գործին . . . Հայ աշխատաւոր դասի մաքուր դաւաններ, ժողովրդի հեծեծանքը ձեր սրտո՞ւմ միայն արձագանդ գտաւ. զո՞ւր զնայիք սրբելու նրա արցունքները եւ ընկաք: Ընկաք, որ ձեր մատաղ արիւնով ոռոգւած Մայր-Հայրենիքը ծլի ու ծաղկի: մեռաք, որ մի ամբողջ ժողովուրդ ապրի: Յարգա՞նք ձեզ, աղերք ջան:

ՖԷԴԱՅԻՆԵՐԻ

ԱՐԻԻՆԱՀԵՂ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

ԽԱՆԱՍՈՐԻ ԼԵՈՆԱԴԱՇՏՈՒՄ

Դաշնակցութան ստեղծման արշալանում, տասնեակների բաժանում, յուլիս 25/6 օգոստոս յարձակում գործեց Խանասորի լեռնադաշտի վրայ և չորս կողմից պաշարեց Մազրիկ կոչված արևմտաօտ քիւրդ ցեղը:

Ֆէդայիների շեշտակի գնդակները գրեթէ բնաջինջ արին այդ թշնամի ցեղը, որի գործն է Աղբակի բոլոր կոտորածները ու խժոժութիւնները, որ դեռ անցեալ տարի, իր վրաններից ոչ շատ հեռու, Բարթոլոմէոսի վանքի շրջակայքում, կոտորեց Աւետիսեանի առաջնորդութեամբ Վանից փախած հայերի հարիւրաւոր խումբը:

Ցեղապետ Շարաֆ-բէյ իր ընտանիքով սրախողով եղաւ:

Յաջողութիւնը փառաւոր և եզակի էր մեր յեղափոխական տարեգրութեան մէջ, յարձակողական տեսակէտից:

Վաւեր տեղեց լեռնոտ դիրքերում մինչև ուշ գիշեր, թշնամիների դիակները կոյտեր էին կազմում:

Դաշնակցութեան ֆէդայիները ցոյց տւին կատարեալ քաջութիւն և անվահերութիւն:

Զոհ տւինք միայն 19 քաջեր:

Կեցցեն քաջաբի Ֆէդայիները:

Կեցցէ՛ Յեղափոխութիւնը:

ՎՐԻՃԻ ԿԵՐԻ. ԿՕՄԻՏԷ

(ՄԻ ՖԷԴԱՅՈՒ ՄԱՍՆԱԻՐ ՆԱՄԱԿԻՑ)

... Դիւ ինքն վերադարձայ արշալանից. յոգնած եմ, ուստի յետոյ կը գրեմ տպաւորութիւններս: Իմացիր միայն, որ արշալանքին մասնակցեցի իբր հասարակ զինուոր: Արշալանումը բաժանւած էր տասնեակների. ես գտնուեմ էի առաջին տասնեակի մէջ:

Մօտեցել էինք Շարաֆ-բէյի վրանին մինչև 15 քայլ: Այդպիսի բան տեսնւած չէր. գնտակները կարկոտ պէս էին թափուում, զլխաւորապէս կանոնաւոր դօրքի կողմից: Զարմանալի է, ինչպէս այնքան գնտակներից մէկը ինձ չդիպաւ: Պատերազմից շատ աւար է բերւած. ես էլ բերի Շարաֆի սուրը եւ այն սպիտակ առլասի վրայ սակտառ փիրմանը, որը Մարդասպանը տւած էր Շարաֆին՝ քիւրդերից համագիւկան դունդ կաղմեղու...:

ՊԱՏԻՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Տէրրոր Բաղէշում, Ֆէդայիների արշալանք Վասպուրականում, ջախջախւած զինւորներ, սրախողովող քրդա-

կան ամբողջ ցեղ, աւերւած քրդական գիւղեր, դիւսմիտ Պոլսում, պայթիւն Բ. Դուան մէջ...

Դարձեալ հայերը:

Ինչպէ՞ս. այսքան արհաւիրքներից յետոյ դեռ յանդգնում են ձեռք բարձրացնել: 25° որ խեղդւած էր նրանց ձայնը, մարած էին յոյսերը, թուլացած արիւնաքամ բազուկները:

Անսպասելի, անհաւատալի լուրեր...

Այո, երկրորդում դողացող Գագան. անշնչացած կարծեցեալ զոհ է այսօր քո գլխին այս զօրեղ հարւած ներ տեղացողը: Դիպումատների խորհրդարաններում յոլսահատ լուրերն են՝ դատապարտւած Յեղափոխութիւնն է, որ նորից բարձրացնում է իր ահեղ ուրտոր:

Ժողովուրդն է սա, փափկասիրտ և փափկաուղեղ յազգային գործիչներ՝, նրա անսպառ, առասպելական ուժն է, որ այսպէս ջախջախի կերպով դուրս ժայթքեց: Ի՞նչ. կարծում էք, որ նա կը ձգի Յեղափոխութիւնը, որը իր մահու և կեանքի ինդիքն է, ինչպէս դուք ձգեցիք սմարդաբար, Պիղատոսի պէս ձեր ձեռները լանալով: Վաղաժամ չէին ձեր դամբանականները, ձեր ողբը, ձեր վայնասունը յմեռած՝ հայ ժողովրդի գլխին:

Տեսաք, յոլսահատւած գործիչներ, հակառակ սուր թանական գաղանթութիւններին, հակառակ դիպումատների չոր ու ցամաք ուղեղով գծած որոշումներին, հակառակ վերջապէս ձեր՝ բուր չարագուշակութիւններին, հայ ժողովուրդը շօշափելի փաստերով ապացուցեց, որ բնաւ տրամադիր չէ մեռնելու: Վիրաւոր հսկան նորից ոտքի կանգնած՝ այնպիսի հարւածներ է հասցնում թշնամուն, որի նմանը դուք չէք տեսել նոյն իսկ նրա յառողջ՝ ժամանակը:

Հայ ժողովուրդը մեռած էիք կարծում: Բայց ահա Բաղէշում Լինչի օրէնքով են պատժուում մէկը միւսի ետեւից մատնիչները և կոտորածի դահիճները: Զարդւած ժողովուրդի արդար վրէժխնդրութիւնն է դա, նրա վերակենդանութեան ամենապարզ ապացոյցը:

Վասպուրականը չտեսնւած օրեր է տեսնում: Այս անգամ հայերն են յարձակում գործողները, ջարդ ու փշուր եղած զօրքն է ցիր ու ցան լինում, քիւրդ ցեղն է ամբողջովին կոտորուում: Հարիւրաւոր ֆէդայիների հետեակ ու ձիաւոր խմբերը յաղթական ընթացքով արշալան են աջ ու ձախ և իրենց անհաշտ թըշնամիների գիւղերը հիմնայտակ անում: Այդ քրդերն էին մեր զինակիր խմբերի ճանապարհ կտրողները, զրանք էին Դերիկի վրայ յարձակողները. դրանց ձեռքով ընկան մեր յեղափոխական ընկերները, դրանցով աւերւեց ամբողջ Աղբակը...

Պաշտպանողական դիրքի մէջ մենք շատ համբերեցինք, կրելով տարիների ընթացքում քրդերի հարւածները, շատ աշխատեցինք ցոյց տալ թէ իրենց դէմ չէ մեր կռիւը: Սակայն իզուր. մեր դիրքը թուլութեան

նշան նկատեցաւ, հակառակորդն լաւելի ու աւելի լըր-
բացաւ: Անհրաժեշտ էր դաս, մի գօրեղ դաս: Այդ
դասը տրւեցաւ, և զգաց քիւրդը երէկայ ֆլահի ուժը:

Այս անգամ քրդերը թող լաց ու շիւան բարձրացը-
նեն, նրանց գերեզմանատները թող դիակները կոյտե-
րով լցւին: Թող քիւրդ կանայք փետեն հիմա իրենց
մազերը, հայհոյանք ու անէծք թափեն դաւաճան
Ալլահի գլխին...

Եւ իբր սրձագանգ մօսին հրացանների որոտին,
պայթեց Պոլսում Բ. Դուռը, — այն ատենի հիմնարկու-
թիւնը, որն այնքան միջոցներ է մտածել աշխատա-
ւորների արիւնը ծծելու, ուր տրւել են նախօրօք մեր
ընկերների մահաժամիւր, որտեղից բղնել է ընդհանուր
կոտորածի գործադրութեան դժոխային ծրագիրը...

Պոլսի զինամիտը միայն մի ծանուցում էր դիպլո-
մատներին և սուլթանին: Թող չմոռանան այդ հրէշ-
ները, որ զինամիտը կը վերանայ միայն ժողովրդի ցա-
ւերի վերանալու հետ միասին. որ քանի ահ ու դողի
մէջ է ապրում հայ ժողովուրդը, նոյն ահ ու դողի մէջ
իրենք են կծկւած մնալու: Թող համոզւեն վերջնականա-
պէս, որ իրենց գլխին մշտապէս սաւառնող աներեւոյթ
ուժը՝ իր դժոխային մեքենաներով, իր յանդուգն, յե-
ւազարժ քայլերով սպառնում է տակն ու վրայ անել
ամէն ինչ...

Առաջին անգամը չէ, որ հայ ժողովրդի թշնամիները
խաչ են դնում մեր Յեղափոխութեան վրայ. նրա դա-
րեկամները՝ նոյնքան անգամ պատրաստել են հանդի-
սաւոր թաղում: Սակայն յանկարծակի պայթած աներե-
ւակայելի ուժեղ մի ցնցում ապշուժիւն է ազդել
թշնամիներին և կիսատ թողել ազգասէր տիրացուների
»ի վերինն Երուսաղէմ«-ը:

Մոռանում էք, կարճամիտներ, որ ժողովրդի
հետ գործ ունէք. մոռանում էք, որ անթիւ երիտա-
սարգներ են իրենց դիակներով պարարտացրել Յեղա-
փոխութեան հողը և իրենց տաք արիւնով ոռոգել նրան...

Բացէք ձեր աչքերը, — գուցէ դուրեկան չէ ձեզ
այդ — բայց տեսէք. Յեղափոխութիւնը չի մեռ-
նում, նա աճում է: Պաշտպանւում էինք մինչև
այժմ — հիմա ինքներս ենք յարձակում. տասնեակներ
էինք կուի դաշտում — այսօր հարիւրաւոր անձնուրաց-
ներ են կրակի մէջ նետւում. մեզ կոտորում էին —
այժմ մենք ենք կոտորում:

Թողէք ձեր տեսական ենթադրութիւնները պատեհ
րուպէի, նոր կոտորածների և այլ հետեանքների մա-
սին: Թողէք ձեր սփեկստութիւնները, ասպսեղից հե-
ռացած գործիչներ — քեսէք, փաստերն են խօսում:
Ժողովուրդը կուում է մտքի կուռղների շարքերը,
եթէ միայն անկեղծ էք:

Իսկ դու, հայ ժողովուրդ, յառաջ... քո ջարդերը
կարեկցութիւն են շարժում: Եւրոպայում. քեզ խղճում

են, քահանաները քեզ համար աղօթում են, պառաւ
կանայք արտասուք են թափում և... լռում: Բո յաղ-
թութիւններն աւելի և աւելի մտածել են տալիս Եւ-
րոպային: Յոյց տուր, ուրեմն, քո բոլոր ուժը — ուժի
առաջ են միայն յարգանքով խոնարհւում:

»Ասպուրականի կուիւր պատիւ է բերում
Հայաստանին«, լսում ենք եւրոպական այն մամուլից,
որը դեռ երէկ հայ ժողովրդին՝ ընդդիմադրութեան
անընդունակ, անպաշտպան ոչխար էր համարում:

Պատիւ Հայաստանին, կրկնում ենք և մենք. պա-
տիւ վերաւոր, բայց ոգով բարձրացած ժողովրդին,
պատիւ մահւան ուխտ արած անձնուրացներին:

Իւ խաղաղութիւն ձեր հոգիներին, կուի դաշտում
վաղաժամ ընկած, վրէժխնդրութեան ծարաւը չիովին
չյագեցրած թանկագին ընկերներ...

ՏԵՐՐՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 9/21 օգոստ.

Նոյն օրն իսկ հեռագրիցիւք ձեզ այն երեք տէրո-
րական գործողութիւններու մասին, որոնք Կ. Պոլսի
Կեդր. Կոմիտէի որոշումով իգործ դրւեցան 6/18 օգ.
չորեքշաբթի:

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՆԳՈՒՆ ՄԷՋ

Օգոստ. 6-ին ձորշաւ ժամուն, որ թրքական 7-ն
էր, կէսօրէն ծաք, Դաշնակցութեան ահաբեկիչներէն
մէկը ուժանակի ծրարը ձեռքին՝ կը մտնէ Օսմանեան
պանքի դռնէն ներս, և սանդուխներէն վեր կը բարձրա-
նայ դրամարդի գրասենեակը մտնելու և պանքը օդ
թռցնելու: Պահպաններն անմիջապէս կասկածելով՝ կը
հետեւին և քանի մը հարցումներ ընելէ ետք, կուզեն
ձերբակալել զինքը: Ահաբեկիչը պաղարիւնը չի կոր-
սնցներ. կը փորձէ իսկոյն ծրարին պատրոյգը վառել
ձեռքի սիկառով, սակայն պահպաններէն մէկը հարւած
մը տալով ձեռքին՝ սիկառը կը ձգէ գետին: Անվախ
հերոսը կը քաշէ մէջքէն ատրճանակը և կուզէ իրեն
համար ճամբայ բանալ, բայց պանքի ոստիկանները մի-
ջոց չեն տար, կը յարձակին վրան, կը կաշկանդեն
և կը տանին մերձակայ պահականոցը:

ԿԱԼԱԹԱՍԻՐԱՅԻ ԱՌՋԵՒ

Ճիշդ նոյն վայրկենին՝ Բերայի երկու ահաբեկիչներ
իրենց վրայ առած պարտքը կատարելու հաստատ ո-
րոշումով կերթան Կալաթա-Սէրայի առջև: Որոշումին
համեմատ ասոնցմէ մէկը ուռմը պիտի պայթեցներ
սալայառաւիկին վրայ և երբ այդ պայթումին հետեան-
քով զինուորներ քա ոստիկաններ դուրս թափէին, երկ-
րորդը իր կարգին պիտի նետէր իր ուռմը այդ դի-

շատիչներու խումբին մէջ: Ռումբը չպայթեցաւ անյայտ պատճառով: Ներկայ գտնուող ոստիկաններն ու զինուոր-ները կատաղաբար յարձակեցան խեղճ տղուն վրայ և կտոր կտոր ըրին:

Երկրորդ ահաբեկիչը, որ քիչ մը հեռուն կըսպասէր, նշարւած էր արդէն. կը հալածեն և կը պաշարեն զինքը: Ահաբեկիչը իր ռէվոլվերով հրէք անգամ կրակ կընէ, սակայն առանց մէկու մը վնասել յաջողելու՝ կը ձերբակալուի:

Բ. ԴՌԱՆ ՄԷՋ

Բոլորովին անակնկալ պարագաներու հետեանքով ժամը ճիշդ 7 և 48 վայրկեան անցած՝ ուժանակի ծրարը կը պայթի առաջին յարկը «Թէշըֆաթի»-ի սենեակներու քով սոսկալի ձայնով ու ահուկի ցնցու-մով, որ շատեր երկրաշարժ կարծեր են հեռուէն:

Պայթումին հետեանքով մէկ քանի սենեակներ կը քակտին, սանդուխները կը փշուրն, հոն գտնուողնե-րուն մէկ մասը անմիջապէս կըսպանուի ու շատեր ալ կը վերաւորին: Պայթումէն անմիջապէս վերջը հրդե-հը կըսկսի. վերի յարկերէն շատ մը մարդիկ ինքզինք-նին պատուհաններէն վար կը նետեն ազատելու նպա-տակով: Բայց անոնց ալ զանազան անդամները կը կո-տրտին, մէկ քանիներու ձեռքը, ուրիշներու ոտքը... Հրդեհը կը տեւէ երկու ժամ ու ամէն կողմէն նոյն իսկ Բերայէն, Թաղային ու զինուորական ջոհանները կը փութացնեն հրդեհին վայրը:

Երբ սարսափելի պայթումը կը լսուի, ոստիկաններ, զինուորներ ու անոնց հետ սօֆթմաներն ու խուժանը կը վազեն դէպի Բ. Դուռը, անմիջապէս դուռները կը գոցեն յանցաւորը բռնելու համար. բայց մեր տղաքը ժամանակին դուրս ելած էին արդէն և տակաւին հրդե-հը չմարած՝ անոնք իրենց գործերնուն գլուխն ան-ցած կաշխատէին հանգիստ, բոլորովին ապահով: Ոստի-կանութիւնը կատղած՝ այդ տղաքը կը փնտռէ. ամէն ջանք գործ կը դնէ յանցաւորը գտնե-լու, բայց յաջողելու և ոչ մէկ յոյս կրնայ ունենալ:

Խանութները դէպքէն անմիջապէս ետքը կը փակ-ւին: Ժողովուրդը կը վազէ դէպի տունները: Զինուորնե-րը թէ Պոլիս և թէ Բերա դուրս կը թափին պահա-կանոցներէն՝ խիստ հսկողութիւն ընելու համար: Ոս-տիկանութիւնը՝ արդէն նախապէս ստացած հրա-մանին համաձայն՝ շատ զգուշութեամբ կը վերաբերի դէպի հայ ժողովուրդը. ո և է թշնամական արարք չի գործադրւիր հայերու նկատմամբ. հայ թաղերու մէջ խիստ հսկողութիւն կը կատարուի: Թուրք խուժա-նը անշուշտ այս վիճակէն գոհ չէր կրնար ըլլալ և իրաւ ալ իրենց դէմքերուն վրայ կը տեսնէր լուրջ տխրութիւն մը. ամէնքն ալ գլխիկոր, հանգարտ էին. այդ իրիկունը Բերայի թաղերուն մէջ տաճիկ պողա-վաճառներ և այդ դասին պատկանող մարդիկ ա մե-

ն և ի ն չ ե ռ և ց ա ն:

Ոստիկանութիւնը սարսափը չընդհանրացնելու և եւ-րոպացոց մտքերը զրգռման վիճակի մէջ չպահելու համար՝ Բերայի բոլոր խանութները բռնի բանալ տը-ւաւ և ստիպեց ժողովուրդը, որ իր գործերով զբաղի, իրրեւ թէ բան մը եղած չըլլար:

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձերբակալութիւններն սկսան, բայց ոչ ծայրայեղ սաստկութեամբ, ինչպէս անցեալ տարի պատահեցաւ: Նոյն իսկ ձերբակալութիւնները գաղտնի, առանց աղ-մուկի ընելու ջանքեր կընէ ոստիկանութիւնը. չորեք-շաբթի գիշեր (6 օգ.) 20-ի չափ հայեր կէտիկ-Բաշայի կողմէն կանցընեն Գում-Գաբու տանելու հա-մար և, որպէսզի ոտքի ձայները չլսուին, ձերբակալած-ներուն կօշիկները կը հանեն:

Բերայի մէջ, Ֆէրիտիէի կողմը, տուն մը կը խու-զարկեն, բայց ո և է բան չեն գտներ: Գում-Գաբուի մէջ ալ կը խուզարկեն դէպքի պահուն Բարձրագոյն Դուռը գտնուող հայ սեղանաւորի մը տունը. աւելորդ է ըսել թէ յոգնութիւններն վրայ կերթայ:

* *

Նոյն օրը Կեդր. Կոմիտէիս կողմէն վեց դեսպաններուն տրեցաւ յայտարարութիւն մը, որ դիմում ընելով հանգերձ Կերոպական ազգերու մարդասիրական զգա-ցութեան, կը յիշեցնէր ցարդ տրւած խոստումներուն անգործադրելի մնալը և կը սպառնար ահաբեկու ծրա-գրի մը իրագործումով, որուն միայն նախերգանքն էին եղած անցեալ տարւան դէպքերը:

Յայտարարութիւնը կը վերջանար հետեւեալ տողե-րով. «Մենք կը պահանջենք որ... տիրող բռնութեան և անսանձ կամայականութեան փոխարէն՝ օրէնքը մի-այն թագաւորէ:

«Մենք կը պահանջենք ինչ որ անհրաժեշտ է լոկ իւ-րեւ մարդ ապրելու համար և երբեք պիտի չդադ-րինք գործելէ, մինչև չիրականանան մեր այս արդար, իրաւացի և մեր նահատակ եղբայրներու արիւնով նւի-րագործւած պահանջները...»

12/24 օգոստոս 97

Բ. Դուռն մէջ եղած պայթիւնի մասին հետեւեալ մանրամասնութիւնները կը քաղենք Կեդր. Կոմիտէի ներկալացւած տեղեկագրէ մը.

«... Որոշւած ժամուն անփոյթ և անխուզ կը մըտ-նենք ներս: Ես վերի դռնէն լրտեսելու համար և ըն-կերս վարի դռնէն՝ ծրարը ձեռքին: Բակին մէջ կը դիմաւորենք իրար. կ'ապահովցնեմ թէ ո՛ր և է անյա-ջողութեան պատճառ չկայ. թէ և քանի մը մարդիկ կան, բայց արգելք չեն կրնար ըլլալ երբեք գործին, որով-

Հետեւ նրբանցքը բաւական երկար է: Թո՛ղ թէ վերջին վայրկենին տղան հաստատապէս խօսք տւած էր կը-րակ տալ ծրարին ինչ պարագայի մէջ ալ գտնւէր, նոյն իսկ եթէ ինքն ալ մէկտեղ օդը թռչելու վտանգին մէջ ըլլար:

Մտանք նրբանցք մը, ուր բազմութիւն չկար, ուր ձիւռ ակոռներ ու սպասաւորի սենեակներ կային: Շատ դիւրին էր հոգ մեր մտադրածը իգլուխ հանել. բայց նախարարներու սենեակը շատ հեռու կը գտնւէր այդ մեր տեղէն:

Վ'անցնինք անոր զուգահեռական եղող միւս նրբանցքը, ուր ժողովի, գրագրի սենեակներ կան կարգաւ և որ լեցուն էր ժողովուրդով ու անցուդարձն անպա-կաս: Սենեկապանները կ'երթան ու կուգան. սօփոտ-ները գետինը ծալապատիկ նստած կը ծխեն:

Վ'ընտրեմ սենեակներէն մէկը — որ «Թէշրիֆաթի» սենեակն է — կը նստինք դռանը ճիշտ դիմացը, ծրարը ոտքերնուս մէջն առած:

Վերջին անգամ մը աչքով կը չափեմ նրբանցքին լայնութիւնը. 3 մետրէն աւելի չէ:

Ա՛լ ժամանակն է:

Ահաբեկիչը չորս անգամ սիկառը դպցնել կը փոր-ձէ և ետ կը քաշէ. երկու անգամ սենեակէն մարդ կելլէ. հեղ մը վերէն, հեղ մը վարէն մարդիկ կանցնին. սիկառը հատած է արդէն. մատները կայրին. ծխա-տուփս կը հանեմ՝ նոր սիկառ մը շինելու:

Դժւարն ան է, որ ամէն անգամ սիկառը մօտեցնե-լու համար, մինչև գետին խոնարհիլ ստիպւած ենք:

Մարդ չ'անցնիր. ոտքի վրայ կայնողներուն հակառակ կողմը նայելէն վայրկենապէս կ'օգտւինք և սիկառը կը դպցնենք:

Վը հեռանանք իսկոյն. արտաքին դռան զինւորնե-րուն մէջէն ալ անցնելով՝ փողոցը կը հասնինք: Վը սպասենք և ականջ կը դնենք լսելու համար թէ չե՞ն պոռար «վուրուն», «թուլթուն»: Քսան քայլ ըրած ենք, բայց պայթիւնին ձայնը չի լսուիր: Վը կասկածիմ՝ չրակը դպած ըլլալուն և կը հարցնեմ.

— Տեսա՞ր աչքովդ պատրոյգին բռնկիլը:

— Փչեցի ալ, կը պատասխանէ ընկերս:

Սիկառը հատած և մինչև բերնին թրջւած տեղը հասած ըլլալը յիշելով՝ չեմ հաւտար ըսածին. կէս ոտք ետ կը դառնամ՝ նորէն տեսնելու ծրարը և ահա այդ միջոցին կը լսուի ահաւելի պայթիւնը, որոշած ժամանակէն 48 վայրկեան ետք:

Ահագին իրարանցում մը սկսաւ: Սրճարաններու առ-ջև նստող թիւրքեր վեր կը ցատկէին. ծառաներ դուրս կը նետուին դռներէն. երկու ոստիկան — որ փողոցին մէջ մեր խօսած ատեն մեր դիմացէն կուգային — կը վազեն ձայնին ուղղութեամբ, քովերնուս կ'անցնին՝ առանց ուշ դարձնելու մեզ. մեզ անմեղ կը կարծեն պայթու-

մէն առաջ փողոցին մէջ մեզ տեսած ըլլալուն համար: Մենք կը շարունակենք ճամբանիս, որ անվերջ կ'երկարի. սալայատակին քարերը կարծես կը փախչին մեր առջևէն: Մենք կը ջանանք զգացնել չտալ թէ վայրկեան մը առաջ հեռանալ կուզենք այդ տեղերէն: Վը հասնինք մեծ ոստիկանատան անկիւնը, որ Բ. Դռան մօտ է և Այա-Սօֆիայի թրամւէյի գծին ուղղութեամբ կ'երթանք:

Ոստիկաններ և զինւորներ մեր կողմը կը վազեն դեռ, բայց մեզ վրայ նայող չկայ: Կառքեր կան ճամբուն վրայ. կառաջարկեմ ընկերոջս անոնցմէ մէկը վարձել: Ընկերս չ'ուզեր.

— Ծուղակ է կառքը. մէջը կը բռնւինք, կըսէ:

— Ա՛լ վախնալու բան չունինք, կըսեմ. փառաւոր կեր-պով վերջացնենք:

Վը մօտենամ կառապանի մը.

— Ի՞նչ կ'ուզես մինչև Ուն-քափանի կամուրջը:

— Հինգ դահիւս, կըսէ աղաչանքի ձևով մը:

— Ի՞նչ շուտ պիտի վարես, գործ ունիմ:

— Վրցածիս չափ:

Քառորդ ժամէն, կամուրջին քիչ մօտեցած՝ վար կիջ-նենք և ծովեզօր կ'ուղղւինք՝ նաւակով դիմաց անցնելու: Դ

Կառավարութիւնը հսկողութիւնը շատցուցած է բնականաբար: Ոստիկանները կատղած՝ մարդ կը փնտը-ռեն, բայց ո՛չ անուն գիտեն և ո՛չ տեղ. այլ պարզա-պէս դիմագծեր կամ արտաքին անորոշ նշաններ. խար-տեաշ, սև, շագանակագոյն՝ մազեր. բարձր, կարճ հա-սակ և այլն: Կապոյտ աչքով երիտասարդներն և ետեւէն ինկած են. անոնցմէ մէկն է եղեր — իրենց կարծիքով — Բ. Դռան ահաբեկիչը:

Հայերուն Պոլսէն հեռանալը բացարձակապէս ար-գիլած է. կաշխատին խիստ հսկողութիւն գործադրել նաւերուն վրայ:

Հիմա սկսեր են ծրարները կամ անոր նման բաներն ալ հալածել ուժանակ կամ ուռմը գտնելու յուսով: Քանի մը օր առաջ ոստիկանները Կալաթայ-Սէրայի առջև կը կեցնեն կառք մը, որուն մէջ կը գտնւէր ծանօթ յոյն վիրաբոյժ մը, պ. Լօղօֆէթիս. կառքին պատուհանէն ծրար մը նշմարած էին: Հակառակ իր ընդդիմութեանը կառքէն վար կիջեցնեն, կը տանին պահականոց, ծրարը քննելու համար: Յոյսերնին պա-րապ կելայ. վիրաբուժական գործիքներ կը գտնեն միայն: Նոյն նպատակով բաւական խուզարկութիւններ կա-տարւեցան Գում-Գաբու՝ Վէտիկ-Փաշա՝ Սամաթիա գա-ւառացիներու և մանաւանդ ուստոսթոցիներու տունները, աւելորդ է ըսելը, ապարդիւն կերպով:

Բ. Դռան մէջ նորոգութիւններն սկսած են արդէն. եղած վնասը քանի մը հարիւր ոսկիի կը հասնի: Դը-ռան պաշտօնեաներու առաջին քանի մը օրւան սար-

սափը հիմա կատաղութեան փոխած է:

Ամենաբարձր աստիճանէն սկսած մինչև ամենահասարակ գրագիրը չարացած են հայերու և մանաւանդ իրենց հայ պաշտօնակիցներուն վրայ: Ամենուն յարգանքը վայելող քանի մը հայ պաշտօնեաներ, հակառակ իրենց բարձր դիրքին, կ'անարգէին ողորմելի հարկւողութեանց գրագիրներէ: Բաւական կարևոր թուրք պաշտօնեայ մը քանի մը օր առաջ այս խօսքերը կ'ուզէ իր բարձրաստիճան հայ պաշտօնակցին.

— «Որով մը մըն ալ դուն նետէ՛, որ քեզի արտաքին գործոց նախարար ընեն»:

Հետաքրքրութեամբ կըսպասէր Օրմանեանի բռնելիք դիրքին՝ վերջին դէպքերու առթիւ. իսկապէս իրեն պէտք է ըսել որ դերը չհանեց սուլթանի իր վրայ դրած յոյսերը:

Դէպքէն հինգ օր ետքը, 22 օգոստ., շրջաբերական մը կարգաւ տուա մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներուն մէջ: Սրբազանը նախ իր շնորհակալութիւնը կը յայտնէ Մարգասպանին, որ խոստացեր է այս անգամ հայերը չջարգել, այլ մեղաւորները միայն պատժել: Քարոզիչներուն և քահանաներուն կը պատկիւն խրատել ու յորդորել ժողովուրդը կարգ ու կանոն պահպանելու: Կը հրաւիրէ թաղեցիները չընդունիլ եկեղեցական ու դպրոցական յարկերու տակ «մնասակար» մարդիկ: Վերջապէս կ'առաջարկէ, որ ամէն հայ հոգ տանի հանրային ապահովութեան, առիթ չտալու համար հաւածանքի և ջարդի:

Կոնդակի ընդհանուր տպաւորութիւնն է նախ՝ հրաւեր մը փոխադարձաբար իրար լրտեսելու և մատնելու, թէ և լռելեայն ըսած. Օրմանեանը այդ մասին աւելի խելօք ու դիւանագէտ է Էջեգեանէն: Երկրորդ՝ տխմար յաւակնոտութիւն մը կարծելու թէ իր՝ պալատ վազելուն վրայ է որ Հրէշը մեղքեր է այս անգամ հայերուն: Օրմանեանը կը մոռնայ, որ հերոս՝ օգոստոսեան ջարդի ատեն, Մոլա-եպիսկոպոսն էր, Բարթողիմէոսը, ազգին պաշտօնական ներկայացուցիչը:

Դէպքին առտուն իսկ Խառն ժողով գումարած էր Ղալաթիա, որոշելու համար թէ ի՞նչ դիրք բռնէ պատրիարքը Համիտին նկատմամբ, երբ յեղափոխականները ո՛րեւէ շարժում առաջ բերեն: Ժողովը կ'որոշէ, որ պատրիարքը անմիջապէս պալատ երթայ, յայտնէ Մարգասպանին թէ նոր շարժումի տարածանքութիւններ կան, թէ ատոնք մասնաւորներու գործ են, թէ ժողովուրդը մատ չունի, և հետեւաբար, եթէ այդ տեսակ բան մը պատահի, ժողովուրդը ոտքի տակ չեթմալու համար հարկ եղածը խորհի:

Այդ որոշումը հազիւ տրւած էր, երբ ուժանակի ծրարը կը պայթի Բ. Դռան մէջ. իրարանցումը կըսկըսի. սարսափը կը տիրէ. խանութները կը գոցեն: Եւ

պատրիարքը կը փութայ պալատ՝ ժամ մը առաջ տրւած որոշումը դործագրելու:

Հրէշը կըսպասէր անոր գալուն. ժամանակները փոխած էին՝ փոխած էր իր դերն ալ. միթէ ինքը «բարեգութ» հայր մը, անմեղ մեղաւորին հետ պատժելու ընդունակ էր...

Խեղճ Օրմանեանն ալ յաղթանակ մը կարծեց տանիլ:

Բայց միայն Օրմանեանը չէ եղեր աժան յաղթանակներու ծարաւի:

Կը լսենք թէ երկու օր առաջ Հնչակեան Մասնաճիւղ մը (չենք գիտեր նորը թէ հինը) դեսպաններուն յիշատակագիր մը խրկած է յայտնելու թէ Դաշնակցութիւն անունով մարմին մը գոյութիւն չունի և հետեւաբար կեղծիք են անոր անունով ցրած Յայտարարութիւնները: Մասնաճիւղը հարկ համարեր է յայտնել միանգամայն թէ ինքը մասնակից չէ վերջին դէպքերուն և կըսպասէ բարենորոգումներու իրագործումին:

Իր կեղտոտութեան և գձնութեան մէջ այնչափ անհաւատարի կը թւի այդ քայլը, որ վերապահութեամբ կը հաղորդենք: Իսկ եթէ ճիշտ է—որ հարկաւ հրապարակելու քաջութիւնը պիտի ունենան— այն ատեն ամէն մեկնութիւն աւելորդ է. կը բաւէ իրողութիւնը միայն արձանագրել:

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Է Ն

80/11 օգոս. 97

Դաշնակցութեան ֆէդայիներու խումբը յուլիս 25-ին (հ.տ.) սկսաւ իր արշաւանքը Պաշկալէի գծին վրայ: Առաջին յարձակումին փախչելու հարկադրեցին սահմանապահ պաշտօնեան՝ նշանաւոր քիւրդ մը. խորտակեցին անոր մարդոց բոլոր վրանները և 2-300-է աւելի քիւրդ ու թիւրք ջարդեցին: Ճամբուն վրայ հանդիպած երեք քիւրդ գիւղեր կոտորեցին:

Մերոնց կորուստն աննշան է:

Յաղթութիւնը առայժմ մերիններուն կողմը կը նշկատուի:

Թիւրք կառավարութիւնը մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնէ յարձակում կրող գիծերը ամրացնելու համար, վախնալով որ հրոսակները քաղաք մտնեն և դժուարաւ հաստատուած խաղաղութիւնը վրդովեն. և ճարը կտրած՝ անդադար սպառնալիքներ կը կարգայ ժողովուրդին:

Պաշկալէի պարտութեան հեռագիրը շատ ծանր տպաւորութիւն ըրաւ թէ կուսակալին և թէ թիւրք ամբոխին վրան: Կուսակալը իսկոյն կանչել տուա «ազգային ընթերց» և պատկերաց որ թող չտան և ոչ մէ-

կուն գրական քաղաք մտնելու:

— «Եթէ հայ հրոսակներ քաղաք գան ու որ և է տան մէջ ապաստանին, իսկոյն իմաց տւէր ինձ: Եթէ տունը վառել իսկ հրամայեմ, հոգ մի՛ ընէք. իմ ծախքովս պիտի շինել տամ: Իսկ եթէ չիմացնէք, վա՛յ ձեզ, ամբողջ ժողովուրդը կոտորել կուտամ, առանց խնայելու սեռի և հասակի»:

Վանի «իշագլուխ» իշխաններն ու եզ առաջնորդը՝ Արսէն վարդապետ, մեծ փութկոտութիւն ցոյց տւած են ուրիշ անգամներ ալ այդպիսի հրամաններ կատարելու:

Ուստի ականջնին տնկած շշուկի մը կըստասեն, իրենց «դարեւոր հաւատարմութեան» նոր ապացոյցն ալ տալու համար:

Այդ լիբերը այս միջոցին քանի մը անգամ շնորհակալութեան ուղերձներ մատուցանելով Համիտին, յայտարարած են՝ թէ «կհաշտեն» սրիկայ աւազակներ են և նպատակ ունին խռովութիւններ հանելով իրենց համախոհ չեղող «հաւատարմներու» վրայէն ալ կայսերական կառավարութեան վստահութիւնը վերցնել տալ: Իսկ իրենք կ'աղերսեն որ Համիտին հովանաւորութիւնն անպակաս ըլլայ իրենց վրայէն:

Կոտորածի լուրեր, չկան:

ՏԵՐՐՈՐ ԲԱՂԵՃԻ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՅ

(Արտատպած Թողցիկ Թերթ, Թիւ 2-էն. 21 օգոստ. 1897)

Կօմիտէիս որոշմամբ տէրրորի ենթարկեցան, մէկը միւսի ետեւէն, հետեւեալ հինգ անձերը, իբր հարստահարող, մատնիչ եւ ոճրագործ.—

1. Մեծ ք գիւղին մէջ սպաննել տրուեցաւ կառավարութեան պաշտօնեայ ԿՈՇՏԵԱՆՅԻ ՊՕՂՈՍԸ, ծանօթ մասնիչ եւ վաշխառու:

2. Խնձոր գիւղին ճամբուն վրան սպաննել տրուեցաւ հանրաժանօթ քիւրդ... *) որ ձեռքէն եկած չարիքը չէր խնայեր անպաշտպան հայ ժողովրդին:

3. Գիւղաւարայի Ս ա գ գիւղին մէջ սպաննել տրուեցաւ նշանաւոր ոճրագործ քիւրդ ՍԸԼՈՆ, որ երեք հայ սպաննած էր կացինով եւ մէկ հայ սիւնի մը կապելով մորթազերծ ըրած էր:

4. Ավզկներ սպաննել տրուեցան սլօխի ԻՍՍՆ եւ իր ՈՐԴԻՆ, որոնք առաջին նշանը տւած էին Բաղէչի ջարդին երեք հայ սպաննելով եւ մեծ գեր խաղացած էին այդ աղետալի օրը:

Այդ գազանները նշանաւոր վաշխառուներ էին միանգամայն. իրենց ծոցէն հանեցան հայերու ստորագրութեամբ պարտամուրհակներ՝ 10,000 դահեկանի արժէքով: Մանրամասնութիւնները առաջիկային:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օգոստ. 5-էն իվեր Վանի նահանգին մէջ դիտուած յեղափոխական շարժումը զանազան մեկնութիւններու նիւթ եղած է եւրոպական մամուլին մէջ:

*) Անունը ծնագրին մէջ անընթեռնի է: Ժան. Խմբ.

Քանի մը Թերթեր չարախորհուրդ լռութեամբ մը անցան անոր վրայէն, ոմանք այդ շարժումին քանակին զանեւ կարծեցին չընդկաստանի գործերուն մէջ, այն ինչ Մեծ Մարդասպանին կառավարութիւնը նախ փորձեց անոր գոյութիւնն իսկ ուրանալ միջնաւայի Polit. Correspondenz-ին ուղղած կիսապաշտօնական հեռագրին մէջ, ապա, իրականութիւնը թաքցնել չկրնալով այլեւս, ներկայացուց ան աւագակային արարքի կերպարանքով, հայ ապստամբներուն վերագրելով այն վայրագութիւնները, որ իր սեփական զինւորները միայն գործած էին Հայաստանի եւ Թէսալիոյ մէջ:

Բացարձակ ճշմարտութիւնը վերականգնելու համար, «Դրօշակի», խմբագրութիւնը իր պարտքը կը նկատէ պաշտօնապէս յայտարարել թէ օգոստ. 5-էն իվեր Թիւրք ջոկատներու եւ քիւրդ հրոսակներու հետ կուող հայերը աւագակներ չեն, այլ իրապէս Դաշնակցական կազմակերպւած խումբեր, որոնց քաջութիւնը արդարապէս գնահատած են տարիներէ իվեր Թիւրքերը՝ Ֆէդայի (անճնուէր) մականունը տալով անոնց, եւ քիւրդերը, որ անոնց յանդիմութիւնը գովաբանած են երգերու մէջ եւ առանձի կարգ անցած ասացուածով մը «Ֆէդայիի գնդակը կը հետապնդէ քիւրդը, կը գտնէ եւ կըսպաննէ»:

Թո՛ղ Մեծ Մարդասպանը չմոխրարի՛ խաբել փորձելով Եւրոպայի հանրային կարծիքը իր գործակալներու այս յայտարարութեամբ, թէ «հայ ժողովուրդի ծայրագոյն տարրերը, ինչպէս նաեւ կոմիտէները, հաւաքել եղած հերան կոտորածներէն» ամէն յոյս կորսնցուցած են նոր շարժումի մը յաջողութեան մասին»:

Անգամ մըն ալ կրննելու պէտք կայ միթէ, թէ հայկական շարժումը քանի մը անհատներու ցնորական երազներու արդիւնք չէ, կամ խումբ մը մարդոց փառամոլիկ տենչանքներու կէտ-նպատակին, այլ թէ կը բխի արդի հայ կեանքին դժողակ պարագաներէն, թէ ամէնէն արդար բողոքն է ժողովուրդի մը, որ կը պահանջէ իր կեանքին, իր պատւին եւ իր ինչքին ապահովութիւնը:

Բայց Եւրոպան չուզեց հասկնալ աղ եւ սուտ խուլ եղաւ:

Ինքզինքը քաղաքակիրթ կոչող Եւրոպան, որ պարտք ստանձնած էր բարոյքի տալու օսմանեան կայսրութեան քրիստոնեայ հպատակներուն կացութիւնը, փոխանակ դարձանելու արդէն գոյութիւն ունեցող շարիքը, արիւնի թւական մը քաջաւ, անողորմ եւ անհաշտ կուի թուական մը, 300,000 դիակներու բուրգ մը կանգնեցնելով իբր ամբողջ պատասխան հայ ժողովուրդին արդար պահանջներուն:

Հետեւանքն ան եղաւ, որ կեանքի պայմանները, որոնց դէմ կը բողոքէր այդ դժբախտ ժողովուրդը, մեծամեծ համեմատութիւններ առին եւ աւելի ու աւելի անտանելի դարձան 1894, 95 եւ 96-ի ահեղի կոտորածներէն ետքը:

Կեանքի ապահովութիւն տւին, 300,000 հայ կոտորելով. եւ այս վայրկեանիս հայու մը կեանքին վրայ յետին շարագործը իշխանութիւն ունի:

Պատուի ապահովութիւն տւին, սոսկալի տանջանքներու ենթարկելով հայ կիներն ու աղջիկները, եւ այս վայրկեանիս հայ ընտանիքի մը պատիւը ամէնէն քիչ պաշտպանւած բանն է Թիւրքիոյ մէջ:

Ինչքի ապահովութիւն տւին, հայու բոլոր ինչքերը յափշտակելով, եւ այս վայրկեանիս հայը տուն չունի, մերկ է եւ անօթի:

Ի՞նչ կարելի է սպասել ժողովուրդէ մը, որ իր արժանապատուութիւնը ոտնակոխ եղած կը տեսնէ, իրենները անողորմաբար կոտորւած, եւ ինքը ստոյգ մահաւան մը դատապարտւած սովէն:

Հայուն միլ բան մը միայն կը մնայ իր կեանքը քաշքշելու համար. յեղափոխութիւնն է աղ, որ անոր ծեղքը պիտի դնէ գէնքը իր գոյութեան թշնամիին հետ կուելու եւ վերջ մը դնելու վիճակի մը, որ արդէն անհանդուրժելի եղած է:

Եւ անա ինչպէս կը բացատրուի երեւումը այդ Ֆէդայիներու, որոնք կորուսած են այն ամէնը, որ սիրելի է իրենց՝ հայր, մայր, եղբայր, քոյր, եւ որոնք մէկ բանով մը միայն կապուած են կեանքին. տենչով դժբախտ գոհերու վրէժը լուծելու, մաքսառելու իրենց ազգի գոյութեանը սպառնացող վայրենիներու դէմ, եւ իրենց մահով իրենց եղբայրներու կեանքն ապահովելու:

Եւ այն իրողութիւնը, որ այսօր հետզհետէ կը քաղմանան Ֆէդայիներու խումբերը, պերճախօս ապացոյց մը չէ ցոյց տալու, թէ հայ ժողովուրդը աւելի ու աւելի կը կառչի յեղափոխութեան եւ թէ անկէ միայն կըսպասէ իր փրկութիւնը:

Վերջին ամիսներու կարծեցեալ անգործունէութիւնը սխալմամբ վերագրեցին հայ յեղափոխական շարժումի կատարեալ դադարումին:

Թո՛ղ գիտնայ Դահիճը, թէ հայ ազգը թէ եւ ծայրատուած եւ վատաբար ջարդուած, յուսահատ չէ եւ գէնքերը վար չի դնիր:

Հայ յեղափոխութիւնը մեռած չէ եւ պիտի չմոռնի, ցորչափ տեսնէ զինքը ստեղծող պայմանները:

Այս Յայտարարութիւնը «Դրօշակի» խմբագրութեան կողմէն հրատարակեցաւ Փրանսերէն լեզուով 6/18 օգոստ. Բոլոր կարեւոր թերթերը արտատպեցին:

Խ Ա Չ Ի Կ Գ Ն Ո Ւ Ն Ի

(Շ Ա Հ Ե Ն)

1865 — 1896

1878-ին, Գնունին, տակաւին տասներեք տարու պատանի, իրենց տան մաճն ու հովական ցուպը ձր-կելով, վասպուրականի է. գիւղէն կանցնի վաղարշապատ, իր հօրեղբոր հովանաւորութեան ներքեւ կը թւե-լու և ուսում առնելու:

Երեք տարիէն ծխական դպրոցը կ'աւարտէ և կը յաջողի մտնել Գ. Ճեմարանը, որ իր փայլուն շրջանին մէջն էր այն ատեն:

Դպրոցական տարիներուն մէջ արդէն աչքի սկսաւ զարնել իր բնոյթը յատկանշող գծերը — յանդգնու-թիւն, անկախութեան ոգի և խանդավառ յափշտակու-թիւն պաշտած գործով:

Հոն ուր ընդգիծադրութիւն մը կամ ցոյց մը պէտք էր վարչութեան դէմ, հոն ուր խիզախ կամք մը և մարմնի ճարպիկութիւն կը պահանջէր, հոն ուր ընկե-րոջ օգնութեան հասնիլ պէտք էր — հոն առաջինն էր Գնունին:

Գիւղական կեանքը, Ճեմարանի ընկերական նիստու-կացը պարզութեան ու անկեղծութեան խոշոր կնիք մը կը դնեն իր վրան. Գնունին իր կեանքին մինչև վերջին օրը կատաղի թշնամի կը մնայ կեղծիքի և ձեւակերպու-թիւններու: Եւ համարձակօրէն կարելի է ըսել որ իր այդ յատկութիւններուն կը պարտի ինչպէս իր ընկեր-ները նոյնպէս իր կեանքին բոլոր ձախորդութիւնները:

Իսկ ասոնք 1886-էն կը սկսին:

Ճեմարանի մէջ սկսած աչացաւի համաճարակ մը քրտնալի Գնունին վերջնապէս հեռանալու այդ հաս-տատութենէն, որու վարիչներու աչքին փուշն եղած էր արդէն:

Գնունին ուզածն էր, չի վարանիր. գիտէ իր ընե-լիքը: Գիւղացին — որ մեծցած էր քաղաքի աղմուկներէն հեռու Ճեմարանի մենութեան մէջ, հանրային գործունե-ութեան իրէալներով ոգևորուն միջավայրի մը մէջ, — ո'չ միայն մոռցած չէ իր գիւղը, այլ հիմա գիտակից սիրով մը կապւած կըզգայ ինքզինքը իր բնագաւառին հողին և մարդուն հետ:

Իր դառնայ իր գիւղը և կը ձեռնարկէ գործի. գիւ-ղացիք իր յորդորով կը բանան վարժարան մը, ուր Գնունին կը փորձէ ժողովել իր նախկին բախտակից-ները՝ պզտիկ խաշնարածներ:

Բայց երկար չի տևեր ադ. տարի մը չանցած իշ-խանները կը ստիպեն զինքը հեռանալու գիւղէն: Պատ-ճառը. պատճառը պէտք է փնտռել բոլոր այն տար-րերուն մէջ որոնք Գնունի խառնածքը կը կազմէին:

Հետագայ դէպքը, որ քիչ մը ետքը կը պատահի Պոլսի մէջ, բաւական բան կը պարզէ:

Գնունին ուսուցիչ եղած է Գատը-գիւղի ազգային վարժարանին:

Գիրակի օր մը եկեղեցիին բակին մէջ կը մօտենայ իրեն՝ գիւղին «մեծ աղային» Աբիկ Ունձեանի հացկա-տակներէն մէկը և բարձր ու հրամայական ձայնով մը — Գիւսիւ, կ'ըսէ, գիտէք, որ Աբիկ էֆէնտին գաւազան գործածելու դէմ է. իսկ դուք հակառակի պէս ատանկ այլանդակ «չօպանի» մահակ մը առեք ու եկեղեցիին

բակին մէջ իր քիթին տակը կը պտտցնէք: Հա՛տ շա՛տ բարկացեր է. պատուիրեց, որ ալ ձեռքերնիդ չառնէք: — Ինձի նայէ, պարոն, էֆէնտիիդ բարեւ ըրէ և ըսէ, որ իրեն չվերաբերած գործին մէջ քիթը չխոթէ: Հաս-կցա՞ր:

— Խեղբոյ գլուխդ ժողվէ՛, միւսիւ, չէ նէ դպրոցէն ճամ-բել կուտամ քեզի:

— Դուն կերեւայ թէ մարդ չես տեսեր դեռ, յիմա՛ր, այս գաւազանիս կէսը գլխուդ կը ջարդեմ, կէսն ալ եկեղեցիին բակին մէջ կը թաղեմ, ու ետքը կերթամ ասկէ:

Բնական էր որ հետեւեալ օրը դպրոցին դուռը գոցւած էր իրեն համար:

Գնունին Պոլսի թաղերուն շրջանը կը սկսի յաջորդա-բար. մէկ տարւան մէջ միջին հաշուով երկու տեղ կը փոխէ. ուր որ կ'երթայ նոյն կրակոտ ոգին է որ միշտ նեղ կը գտնէ զինքը շրջապատող մթնոլորտը: Իր բուն յանցանքը — եթէ յանցանք է — իր արժանապատ-ւութեան և պաշտօնի գիտակցութիւնն է, աղա-հոգա-բարձական ռեփիմի դէմ անողոր մաքառումը, ու մերկ անկեղծութեամբ դատափետումը այն ամէն բանի, ինչ որ իր աչքին կեղծ, սուտ էր կամ սխալ:

93-ին Ռոտոսթոյի պաշտօնի կը կոչուի Անդրէասեանի (Սուրէն) հետ:

Իր մտերմներու կարծիքով ալ հանգիստ պիտի ըլ-լար Գնունին. իր պաշտօնակիցները ամենքն ալ իրար հասկցող, իրենց գործին հաւասարապէս գիտակ ու կարող էին:

Մանկավարժական անօրինակ գործունէութիւն մը սկսած էր: Աս ալ շատ չի տևեր սակայն. քանի մը ամիսէն փոթորիկը կը պայթի՝ հիմնայատակ կործանե-լու նոր սկսած գործը:

Հմայեակ եպ. Դիմաքսեան — այն ատեն առաջնորդ Ռոտոսթոյի — չի կրնար հանդուրժել այդ մարդիկը, որոնք ոչ միայն իրմէն աւելի յարգանք կը վայելէին ժո-ղովուրդէն, այլ պատճառ եղած էին եկեղեցիին հասոյթ-ները առաջնորդին քսակէն դպրոցին դարձնել տալու:

Դիմաքսեան նախ կը փորձէ երկդիմի քարոզներով նորեկները հարեւորել: 2ի յաջողութիւն: Եւր տարածել կուտայ այն ատեն կառավարական շրջանակներու մէջ թէ ազգային վարժարանի ուսուցիչները կովկասցի յե-ղափոխականներ են և առաջնորդին համար ալ կասկա-ծելի մարդիկ:

2երբեկալեւու վտանգին տակ՝ Գնունին Անդրէաս-եանը և ընկերները, այլ և այլ ճամբաներով, կծիկը կը գնեն գիշերանց Ռոտոսթոյէն:

Ռոտոսթոյի ձախողանքը չի վհատեցներ Գնունին. ար-դէն հաշուեր էր իր աստղին հետ, որ թափառայած կը պտտցնէ զինքը մէկ տեղէն միւս տեղ:

Այդ կեանքը կը յարմարէր իր խառնածքին, որ միշտ յուզումներու հետամուտ՝ թերեւս ցամքէր հան-դարտ գործունէութեան մը մէջ:

Ուսուցչութիւնը յագուրդ չէր կարող տալ անոր հո-գիին. եթէ կը հաւտար թէ նոր սերունդը պատրաս տել պէտք էր ապագայի — յամառ կոխներու համար, ինքզինքը չէր կարող չէզոքացնել յեղափոխական ժա-մանակակից շարժումէն, որուն անհրաժեշտութիւնը, որուն ծագում՝ տուող պարագաները ո'չ միայն տեսած, այլ և իր մորթին վրայ փորձած էր: Վասպուրականի

յիշողութիւնները չէին կարող ջնջուիլ իր մտքէն. իր ընտանիքին պատմութիւնը թոյլ մանրանկարն էր ահաւոր իրականութեան մը:

Եւ զարմանալի չէ որ Գնունին առաջիններէն մէկն եղաւ, որ ձեռքը կը կարկառէ Դաշնակցութեան դրօշը բարձրացնելու Պոլսի մէջ:

Այդ օրէն Գնունին ուրիշ կեանք չ'ունենար, իր ամբողջ հոգին ու միտքը ասով զբաղւած է: Դպրոցէն դուրս Գնունին փնտռելու էր սրճարաններուն մէջ կամ պարտէզներուն խորը՝ բան գործ ըրած սթափեցնելու, ոգևորելու իր շուրջը հաւաքւած արհեստաւորները, խանութպանները, որոնք առաջին անգամ կը տեսնէին վարժապետ մը, որ ո՛չ թէ գինիի կամ օղիի գաւաթներ կուգար պարպելու հոն, այլ բացատրելու հարստահարածին և ճնշւածին՝ իր իրաւունքները և անոնք կորզելու կերպը աշխարհի մեծերու ճիրաններէն:

Եւ մինչ Անդրէասեանը (Սուրէն) առաւելապէս «ուսեալ»՝ ներսը շրջանին մէջ կը նետէր իր ցանցը, Գնունին գաղափարի սերմերը կը ցանէր աւելի լայն տարածութեան մը մէջ, ժողովրդի հասարակ կոչւած այն խաւերուն, որոնք մեր յեղափոխական կեանքի անհատական գործունէութեան հրաշալի տիպարները արտագրեցին, որոնց անունները՝ շատերուն անծանօթ, մեր ժողովրդի բարոյական բարձրութեան ամենէն պերճախօս ապացոյցներն եղան:

Ռոտոսթոյէն դարձին ա՛լ աւելի մեծ ծաւալ ստացաւ իր գործունէութիւնը, երբ յաջողեցաւ Սալաթիոյ վարժարանին մէջ ուսուցչի պաշտօնն գտնել:

Զուգադիպութեամբ մը՝ Դիմաքսեան, որ ռոտոսթոյիներու զայրոյթէն փախած էր, քարոզիչ կը նշանակւի նոյն թաղին:

Առիւը անխուսափելի էր. Գնունին մոլեգնաբար առաջ կը նետուի:

Սամաթիոյ պաշտօնէութիւնը կը սարսափի: Զի կըրնար տանիլ այդ կատաղի մարդը, որ առաքեալի մը հեղինակութեամբ նոյն քանակով կը չափէ ու կը ձեռնէ եպիսկոպոսին վեղարը, թաղականին սին ամբարտաւանութիւնը, հոգաբարձութեան անտեղի յոխորտանքը, պատրիարքարանի «խոհեմ» ընթացքը, Մարդասպանին հայկործան սիստեմը:

Հրաժարագիր մը կը հասնի իսկոյն: Գնունին կը խնդայ: Ու՛շ էին մնացեր: Դպրոցէն կրնային հրաժարեցնել, բայց թաղէն ո՛չ: Իր բոյնը արդէն շինած էր Սամաթիոյ մէջ: Տունները բաց էին իր առջև. ամենքը սիրով ու համակրանքով կ'ընդունէին այդ երիտասարդը, որ զարմանալի կերպով լծորդած էր իր մէջ արևելեան դերվիշի յատկութիւնները եւրոպական կենցաղագիտութեան հետ: Սամաթիան ա՛լ իրենն էր, Սամաթիոյ յեղափոխականները իր որդեգիրներն եղան:

Եւ բան մը, որ պատիւ կը բերէ այդ թաղին և անոր անհետաւոր դասակարգին, այն պարագան է, որ Գնունին երկար ատեն անծանօթ կը մնայ նոյն տեղի ոստիկանութեան, հակառակ իր զարմանալի յանդգնութեան որով յեղափոխական շարժումներու մասին կը խօսէր ու կը վիճաբանէր հանրային վայրերու մէջ և հոն իսկ կը բաժնէր «Դրօշակ»-ի թիւերը խումբի տասնապետներուն:

95-ին կը ձեռքակալուի պարզ կասկածով մը: Իր

վրայ բան մը չկրցան ապացուցանել: Հիւսնին, ոստիկանութեան որջի արիւնարբու գաղանը, իր սուր հոտառութեամբը Գնունին մէջ զգաց իր որսը: Զնդանը և անօթութիւնը, իբր միջոց, հետեւանքի մը չբերին. բայց Հիւսնին իր ճիրաններուն մէջ կը պահէ զինքը, մինչև ապացոյց մը ձեռք անցընէր:

Գնունին ոչ միայն չի վհատիր, այլ պարապ ալ չի կենար: «Շահէն ի վանդակի» ստորագրութեամբ նամակներով վրէժի ու գործի կը մղէ իր ընկերները:

Վեց ամիսէն կ'արձակուի զօրաւոր միջնորդութեան մը շնորհիւ: Բանտէն կատարած դուրս կ'ելլայ. միտքը դրած է ալ չկենալ Պոլիս, այլ երթալ Վասպուրական և իր հին տենչը իրագործել — հրոսակներու խումբ մը կազմել: Բայց շատ բան փոխւած կը գտնէ իր շուրջը: Եղաւ փոխական գործունէութիւնը խոշոր քայլեր կատարած էր. տեղական կոմիտէները՝ Ռումի, Սիւնիք, Շանթ, Զոհ, Ապուպեյճ՝ ձեռք ձեռքի տւած յեղափոխական ցանցով մը պատած էին Պոլիսը: Գնունին կ'ոգևորուի, չ'ուզեր բաժնելի իր ընկերներէն և կ'անդամակցի Զոհին:

Բանտէն ելլելուն առաջին գործը կ'ըլլայ ընկերներուն հաղորդել բանտին մէջ իր քաղած նորանոր փաստերը և տեսածները ոստիկանութեան բռնութեան հաճի Տիգրանի կատարած գձուձ դերի մասին և տէրրօր պահանջել անոր դէմ: Բան մը որ կը կատարուի 2 յունիս 95

Այս անգամ Գնունին պաշտօն կը գտնէ Ազգային Որբանոցին մէջ: Գթութեան այդ յարկին տակ կը գտնէ մատաղ մարդկութիւն մը երեսէ ձգւած, իր ճակատագրին թողւած: Սուր նայածքով հասու կըլլայ որ այդ սրբենի կեանքերը մութին մէջ տեսակ մը առուտուրի ապրանք են մարդկային զաղանական կիրքերու: Հող կըսկսի նոր կուլ մը: Մարդկեղէն ահագին վոհմակ մը ունէր իր դիմաց:

— Պիտի յաջողիմ . . . :

Եւ կը յաջողի Որբանոցը փոխադրել Հիւսնի գանդէն անջատ տեղ մը. որբերը ինքզինքնին կը գտնեն ուրիշ աշխարհ մը ուր մարդը գազան չէ . . . Յաջողեցաւ, բայց ամբողջ Հիւսնի գանդէն իր դէմ զինուցաւ իր խաւարային զէնքերով. գաղտնի դաւեր նիւթեցին, ամբաստանութեան չարաշուկ զրոյցներ ցանցին ամէն կողմ:

— Գնունին գաշնակցական է:

— Գնունին բարձին տակ ատրճանակ կը պահէ:

Հոգաբարձութիւնը սարսափահար՝ իր սրբաբնիկութեան ատենը կը կանչէ Գնունին. առաջին ամբաստանութեան համար չի համարձակիր բերան բանալ և բոլոր ուժը կը թափէ ատրճանակի խնդրին վրայ: Ատրճանակ. ի՛նչպէս կրնայ ներսիլ այդպիսի յանցանք մը, մանաւանդ Որբանոցին մէջ, ուր քանի մը կտոր միս ու քանի մը գունտ հաց կը խրկուի «բարեխնամ» կառավարութեան կողմէ՝ գողերու ու աւազակներու փորը կշտացնելու համար:

— Իրա՛ւ է, պ. Գնունի, որ բարձրնուդ տակ ատրճանակ կը պահէք:

— Այո՛, ոչ միայն բարձիս տակը, այլ և մէջքս:

— Ի՛նչ պէտք ունիք ատրճանակի:

— Պապը-Ալիի կոտորածին օրը, երբ դուք ամենքդ ալ պահւում էիք, մենք Որբանոցին տղաքը բիրերով միայն կրցանք զինել ինքզինքնին պաշտպանելու համար: Իսկ ես բոլոր յոյս դրած էի ռեվօլվէրիս փո-

դին ու գնտակներուն վրան:

— Այ, պ. Գնունի, ձեր ատրճանակը պարզապէս դաւաճանութիւն մըն է Որբանոցին մէջ, և հոգաբարձութիւնս չի կրնար ներել:

— Ձեր կարծիքին ըմբռնումն է ադ: Ես ատրճանակ պիտի ունենամ միշտ և եթէ դուք անփոյթ էք տակաւին մէյ մէկ հատ ունենալու, ամօթ ու վայ ձեզի. կը ցաւիմ վրանիդ:

Այդ դէպքէն քանի մը օր ետքը Գնունին Որբանոցէն դուրս կ'ելլէ ոստիկանութեան յանձնելու սպառնալիքին տակ: Բայց հոգաբարձութիւնը խոհեմութիւն կը համարի վճարել անոր տարեկան ամբողջ թոշակը — Պոլսի մէջ չտեսնած բան մը — իր օձիքը ազատելու համար այդ «վտանգաւոր» մարդէն:

Դաշնակցութիւնը իր տենդոտ գործունէութեան մէջն էր այդ միջոցին. օգոստոս 14-ի պատրաստութիւնները կը տեսնէին:

Գնունին հիմա իր ամբողջ ժամանակը — որուն մէկ շնչին մասը միայն կը գրաւէին իր մասնաւոր դասերը — նւիրեց գործին. օր մը Սամաթիա, օր մը Իւսկիւտար օր մը Բերա, շարունակ իր խումբերուն հետ կ'անցընէր իր ժամանակը:

Յունիս 3-ի կախաղանները իր դառնութեան չափը լեցուցին: Գնունին վճռին գործադրումէն քանի մը օր առաջ առաջարկեց կեդր. կոմիտէին ռաբակիր խումբի մը գլուխն անցած՝ սատկեցնել դահիճները, խորտակել կախաղանը և տղաքը ազատել: Գնունի առաջարկը, որ շատերուն ալ տենչն էր, կարելի չեղաւ իրագործել. պատրաստութիւնները վերջացած չէին, կը վախճուէր ամբողջ գործ մը գահավիժել:

Անկէ ետք Գնունին բոլորանէր խրեցաւ իր նոր ստանձնած գործին մէջ — պատրաստելու Սամաթիոյ կուրը, որուն ծրագիրը մշակած էր ինքը Սուրէնի և Միսակեանի հետ: Ալ կը հանդարտի, ինքն իր մէջ ամփոփւած. ամփոփւած մանաւանդ գնդակի, ուժանակի և ռումբերու իրեն այնքան սիրելի զօսանքին մէջ:

Յուլիսէն սկսած մինչև դէպքին օրը ցանցառ կերևնայ իր բարեկամներուն. Սամաթիայէն դուրս կ'ելլայ կօմիտէներու արտասովոր ժողովներուն ներկայ ըլլալու միայն: Օգոստոս 13-ի իրիկունը՝ վերջին ժողովէն դարձին, ուրախ ուրախ իր վերջին մնաք բարովը կըսէ բոլոր իր ընկերներուն, ամենուն հետ ալ համբուրելով:

Նոյն օրը հետեւեալ երկտողը կը գրէ իր մէկ մտերիմին.

Սիրելի իմ,

ձառը հարմնիքիս օրն է... Ազատութեան ոգին թնկերը քաց' անհամբեր ինձի կըսպասէ: Ներքէ՛ որ առանց քեզի կանխաւ լուր տալու, վերջնական որոշումս տուի: Հարմնիքիս շաքարը կ'ընդունիս: Կարօտազին համբոյժներով

13 օգոստ. 1896

Շ Ա Ն Ե Ն

Գնունին պատրանքի մէջ չէր:

Վրդար իր քայլին օրհասական ելքը. չընկրկեցաւ: Կուրն առտուն կանուխ ելաւ. գիտէր թէ իր վերջին օրն էր. բայց մահւան հանդէպ չկորսնցուց իր պաշարները: Սովորականէն շատ երկար զբաղեցաւ իր արդուզարդով. կարծես հարսնիքի կը պատրաստէր իրօք:

Սամաթիոյ մէջ սկսելիք կուէն առաջ վերջին ժողով մը որոշած էին ընել Միսակեաններու տան մէջ:

Կուրն ղեկավարները՝ Գնունին, Անդրէասեանը, Միսակեան և Արապեան, առաւան ժամը 7-ին կը պատ-

րասուէին արդէն ժամադրաւայրէն մեկնելու, ամէն մէկը իր կուրի դիրքը գտնելու համար, երբ յանկարծ Միսակեաններու տունը պաշարեցաւ:

Իրապէս Գնունին ձերբակալելու եկած էին: Տանջանքի տակ կորզւած խոստովանութիւն մը այդ անունը տւած էր իրր պետ մօտալուտ խռովութեան մը...

Չորս քաջերուն կը մնար անձնատուր ըլլալ կամ մեռնիլ:

Բայց անոնք արդէն մահը կը փնտռէին. չչփոթեցան. նախկին ծրագիրը ալ անիրագործելի էր. որոշեցին պաշտպանողական դիրք բռնել, հաղորդել կուրի միւս կէտերուն իրենց կացութիւնը և անխախտ պահպանելով որոշումը՝ կուրը միայն կէսօրին սկսիլ: Գնունին հեզոտ քաղաքավարութեամբ մը կը յայտնէ պաշարող ոստիկաններուն, թէ կէսօրին անձնատուր պիտի ըլլայ:

Այնչափ մեծ էր հայ յեղափոխականի ազդած սարսափը, որ ոստիկանները չեն համարձակիր բռնութիւն իգործ դնել և ապուշ ապուշ կը կենան տան առջև 5 ժամէն աւելի, սպասելով որ կէսօրին Գնունին կամովին անձնատուր ըլլայ:

Կէս օրէն կէս ժամ անց՝ Գնունին կը նետէ առաջին ռումբը, որուն կը պատասխանէ իսկոյն Լէպլէ-ճի փողոցին ռումբը...

Կըսկսի կուրը, ահաւոր, իր տեսակին մէջ անօրինակ, ոչ ինքնապաշտպանութեան, այլ ահաւոր բողբոջի մը...

Գնունին գլխաբաց՝ մէկ ձեռքը ռէվօլվեր, միւսը ռումբ, վրէժխնդրութեան ոգիի՝ պէս կերևնայ պատուհանին առջև սև մուխին ու խլացուցիչ որոտներուն մէջ: Իր ռումբերը շանսատակ կը փռեն Դահիճին զինուորները, իր դառն ու նախատախիջ խօսքերը ահարկու ձայնով մը ուղղւած Մարդասպանին՝ սոսկում ու կատաղութիւն կ'ազդեն ներկայ բարձրաստիճան զինուորականներուն:

Այ թէ սպանել կ'ուզեն զինքը, այլ ողջ-ողջ բռնել:

Հիւսնին ալ կը վազէ կուրայ Սամաթիա, կը կանգնի վարը փողոցին մէջ, պատուհանին առջև. շան պէս կըսկսի քծնիլ Գնունին որսալու համար. «հայրագութ», սուլթանը պիտի ներէր իրեն ու պատիւներ ալ պիտի տար...

— Դուն չէ՞իր, գազան, որ 6 ամիս չարչրկեցիր ինձի բանտին մէջ: Քեզ ալ կը ճանչնանք, խօսքերդ ալ կը հասկնանք: Գնա՛, պատմէ՛ տեսածդ Երզրզի Դահիճին և ըսէ՛ որ աս նախերգանքն է ըլլալիքին: Անձնատուր ըլլա՛, հա՛, հա՛, հա՛... մեր դիակները կը ստանաք, բայց մեր մահը ձեզի շատ սուղ պիտի նստի... Համիդին գահը պիտի տուժէ հայ ժողովուրդին չարչարանքները...

Հիւսնին ինքզինքը կ'ուտէ, բայց ի՞նչ կրնայ ընել. սուլթանին բռնակալ ուժը չի հասնիր մինչև այդ պատուհանը: Տղաքը կը մերժեն որ և է բանակցութեան մանել զինուորականներուն հետ, առանց դեսպանական թարգմաններու:

Եւ ռումբերը կը գողան ու կը ղզկտեն Համիդի զինուորները:

Մնացածը ծանօթ է արդէն:

18 ժամերու ղիւցազնական կուէ մը ետք, երբ ոչ յոյս կը մնայ, ոչ ռազմավթերը, չորս քաջերը կորոշին ինքնասպան ըլլալ: Գնունին կըսպառէ այդ որոշումին

ալ գործադրումին... կը տեսնէ իր շուրջը իր սիրելի Սուրենի վերջին ջգածութիւնները մօրֆինի ազդեցութեան տակ, ականատես կը լայ Միսակեանի և Արաբեանի հոգեւորքին... վայրկեան մըն ալ՝ կը նետէ իր վերջին ուժերը զինուորներուն շարքի մէջ և ուշուրբ վերի փողն ալ կուղղէ իր բերանը...

Գնունին կուղնեցրու առաջինը և մեռնողներու վերջինն եղաւ:

Պալքլիի հանգստարանին մէջ՝ պարզ հողակոյտ մը, որ մարդկային յարգանքի ո՛չ մէկ նշանը կը կրէ իր վրան—նախանձոտ գուրգուրանքով մը կը պահէ ոսկորները այդ քաջերուն, որոնք գիտցան արհամարհել մահը՝ կեանքի հաճոյքը պարտքի կատարումին մէջ որոնելով:

Բուսական կեանքի մէջ գետնաքարը՝ հոգիով և մտքով թզուկները անկարող էին և անկարող եղան այդ դիւցազնական քայլը ըմբռնելու:

Բայց թշնամի մը, Միսակեաններու տունը պաշարող զինուորներուն հրամանատարը, սքանչացումով կը հաստատէր որ եթէ հարկւր Գնունի ըլլային հոն, իրենք ամօթապարտ ետ դառնալու պիտի հարկադրուէին:

Այդ գնահատումը ա՛լ աւելի կարժէ. բայց Գնունիի աճիւնը կրնայ խաղաղ մնալ:

Հայ նախնիներու դաշտին մէջ կը վերսկսի շարքը նոր հերոսներու, որոնց թիւը լեզէօն է, որոնց նշանաբանը՝ դիմել անխոնջ դիմել դէպի իդէալը, նոյն ճամբով, ուր քալեցին իրենց նահատակ ընկերները, ուր ինկան անոնք, հարթելով ճամբուն վիհերն ու անդունդները իրենց անշնչացած դիակներով:

Ե Ի Ր Ո Պ Ա Վ Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Է Ն

ԿՕՐԵՍՊՕՆԴԱՆՍ ՊՕԼԻՏԻԿ.— Իրաւ է, որ գաւառներու մէջ իրենց յուսահատ կացութեան հետեանօք, հայոց մէջ ստուգիւ մեծ դժգոհութիւն կը տիրէ: Դիւանագիտական շրջանակներու մէջ այն կարծիքը կը գերակշռէ, թէ Բ. Դուռը իր սեփական շահուն համար բան մը ընել պարտաւոր է հայ ազգին:

ՍՅԱՆԴԱՐԴԻՆ կը հաղորդեն Պոլսէն թէ վանի անգլիական հիւպատոսին մէկ հեռագրին համաձայն, կը կարծւի թէ չորս հայ խումբեր կը գտնուին տակաւին օսմանեան հողի վրայ, թէ և թուրքերը կը յայտարարեն թէ անոնք ետ մղած են Պարսկաստան:

Վանի և Մուշի իշխանութիւնները կը ջանան հաշտութիւն մը առաջ բերել հայերու և քիւրդերու միջև:

ԴԻՅԼԻ ՆԻԻՁ-ին կը հաղորդեն Թաւրիզէն հետեւեալ մանրամասնութիւնները հայ ֆէդայիներու յարձակումի մասին Խանասորի հովտին մէջ գտնուող քիւրդերուն վրայ:

Հայերը սահմանն անցան օգոստ. 6-ին և թշնամին յանկարծակիի բերին վրաններու ներքև: 3 — 600 հոգի սպաննեցին ու վերաւորեցին: Այդ քաջագործութեանէն ետք, հայերը, որ միայն 20 հոգի կորսնցուցած էին, լեռները քաշեցան: Սուտ է բոլորովին, թէ կիներ ու մանուկներ տանջած կամ սպաննած ըլլան: Հայերը ձեռք ձգած են կարևոր ստուգադրեր:

ԿՕՄԲԱ (Աթէնք).— Պոլսէն եկած վերջին լուրեր-

րուն համաձայն՝ Բ. Դուռն մէջ պայթած ուժանակի ծրարը 48 հոգի սպաննած և բազմաթիւ մարդիկ վիրաւորած է:

Հայ ապստամբներու շարժումը վասպուրականի մէջ մեծ ուրախութիւն կը պատճառէ դժբախտ ժողովուրդին, որ այնքան տարիներէ ի վեր կը հեծէ մահիկի բռնապետութեան ներքև:

ԳՕԼՈՒԱ.— Օսմանեան կառավարութիւնը Պարսկաստանին ծանուցագիր մը խրկեց, պահանջելով անմիջական պատժումը այն խումբերու, որոնք սահմանն անցած են սպաննելու, աւերելու և թաղնելու համար: Կը պահանջէ վերաւորեալներուն և մեռածներու ընտանիքներուն համար ալ տուգանք, իսկ պարսիկ զինուորական իշխանութիւններուն, որոնք չկրցին արշաւանքն արգելել՝ խիստ պատիժ:

ՄԷՄՕՐԻԱԼ ԴԻՊԼՕՄԱՏԻԿ.— Թէ հրանի դահլիճը կը պնդէ թէ ինք Բ. Դրան իմաց տւեր է Պարսկաստան ապստանող հայերուն դաւադրութեան և շարժումներու մասին: Կը մերժէ ամէն պատասխանատուութիւն և կը յայտարարէ, որ եթէ թիւրք զինուորները լաւ պահանած ըլլային սահմանազուխը, հայերուն վերջին արշաւանքը տեղի չէր ունենար:

ՄՕՐՆԻՆԿ ՊՕՍՏ.— Պարսկական սահմանագլխի հայ գործակալները նոր արշաւանք մը ընել կը մտածեն: Հրաման տրուեցաւ պարսկա-թրքական սահմանագլուխը ղօրք խրկել:

ՈՒՅՏԵՐԻ ԳՈՐԾ.— Մարեշալ Ջէքի փաշան կը հեռագրէ, թէ հայ աւագները իրենց վերաւորները Պարսկաստանի սահմանը, Հաֆուան(°) դիւղը փոխադրած են և յաջողած են 500 ձիաւոր հանել Պաշկալէի վրայ յարձակելու համար: Սակայն գայմագամ Հալիմ պէյ և Պաշկալէի իր պաշտօնակիցը, ուժերնին միացնելով՝ յաջողեցան արգելել(°) հայ յեղափոխականներու խուժումը դէպի Թիւրքիա: Ցաւալի է տեսնել, որ քանի մը տեղական պարսիկ իշխանութիւններ հայ արշաւողներուն դէմ անփոյթ կը գտնուին հարկաւոր միջոցներ ձեռք առնելու և մինչև իսկ կօքնեն անոնց,— իրողութիւն մը, որ երկու երկիրներուն միջև եղող յարաբերութեան ու դաշնագրութիւններուն համաձայն չէ:

Նոյն գործակալութիւնը կը հեռագրէ օգ. 31-ին թէ պատրիարքը Մարդասպանին գահակալութեան տարեգարծի օրը ներկայացեր է պալատ հայ ազգի կողմէն բարեմաղթութիւններ ընելու: Մարդասպանը իր գոհունակութիւնը յայտնած է ընդհանրապէս հայ ազգին(°) և մասնաւորապէս պատրիարքին ընթացքին համար: Վերադարձին պատրիարքը մաղթանք կատարած է Մայր եկեղեցիին մէջ:

Պատրիարքարանը պատրաստած է շնորհակալութեան ուղերձ մը այն ներողամտութեան համար, որ Մարդասպանը ցոյց տւած է հայ ազգին նկատմամբ վերջին դէպքերու միջոցին:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ մէջ ստացւած է.

Սուլինա՝ Սարգիսեան 20 ֆր. Սուչաւա՝ Թէոփիլեան 1 ֆր. Բաբիլոնէն՝ Շէմա 2 ուրբի, Մ. Գ. 3 ուրբ.

Լօզան՝ X-ից 5 ֆր.—Ժընև՝ Հաճենից 2 ֆր., 55 ս
 Բեն Էդիսոնի գրեթե մեքենայ մը (միմեոգրաֆ) № 4:

Պուրբէշի Ամպ խւն՝ Ա. Պ. 5 ֆր., Գ. Արսլանեան 4 ֆր.,
 Յ. Հաքարճեան 2 ֆր., Բ. Արմաղանեան 2 ֆր., Յ. Ճա
 մուզեան 1 ֆր., Աւետիս Մինասեան 2 ֆր., Կայծակն
 խումբէն՝ Ա. Ճ., Կ. Գ., Յ. Ն., Զ. Բ., Գ. Թ., Յ. Հ.,
 Պ. Կ., Մ. Բ., Յ. Ա., Ա. Գ. 1-ական ֆր.:

ՈՍԿԵՅԱՆՔ քղ-ի Կոմիտէն ստացած է.

Արմէն 20 օսմ. ոսկի, Թուրքի 50 օսմ. ոսկի, Արդոս
 10 օսմ. ոսկի, Բուլղարեան Լօան 15 օսմ. ոսկի, Արգոս
 25 օսմ. ոսկի, Բալմորալ 30 օսմ. ոսկի, Ուրադ 75 օսմ. ոսկի.

Անգրանիկ խ. 30 ևս 29 1/2 դաճ., Բամբուխ խ. 25
 ևս 25 դաճ., Որոտում խ. 12 ևս 12 դաճ., Առիւծ
 10 դաճ., Հօշրօթ, Բաղամ, Ազգ և Խալիկ 40 դաճ.
 Որսորդաց խ. 30 դաճ.:

ՅԱՊԱՐ քղ-ի Կոմիտէն ստացած է

Մայիսի ամսավճարները.

Վրէժ Կոմիտէ 70 դճ., Սուրիւն շրջ. 55 դճ., Զրվէժ
 շրջ. 27 դճ., Գեղջուկ շրջ. 20 դճ., Փոթորիկ շրջ. 40
 դճ., Մամիկոնեան շրջ. 30 դճ., Կուռփ շրջ. 30 դճ., Նո
 րածին շրջ. (ապրիլ և մայիս) 40 դճ., Բ. Ս շրջ. 47 1/2 դճ.

Յունիսի ամսավճարները.

Վրէժ Կոմիտէ 70 դճ., Սուրիւն շրջ. 55 դճ., Գեղջուկ
 շրջ. 20 դճ., Զրվէժ շրջ. 27 դճ., Նորածին շրջ. 20
 դճ., Սուր 15 դճ.:

Գնդակ շրջ. (յունիս և յուլիս ամսավճարը) 95
 դճ., Փոթորիկ շրջ. 40 դճ., Մամիկոնեան շրջ. 30 դճ.,
 Կուռփ շրջ. 30 դճ.:

Յուլիսի ամսավճարները.

Վրէժ Կոմիտէ 70 դճ., Սուրիւն շրջանակ՝ 55 դճ.,
 Գեղջուկ շրջ.՝ 20 դճ., Զրվէժ շրջ.՝ 27 դճ., Փոթորիկ
 շրջ.՝ 40 դճ., Մամիկոնեան շրջ.՝ 20 դճ., Կուռփ շրջ.
 30 դճ., Սլաք շրջ.՝ 30 դճ., Նորածին շրջ.՝ 20 դճ.:

Օրոտու քղ-ի Բանակ խմբէն Ժորժի միջոցաւ 37 1/2 դճ.:

ՆԱԽԱՅԱՆԳԻՍՏԻ Կոմիտէն ստացած է.

Գաղթավայրի մասնաճիւղէն՝ Հովարարէն՝ Ծով 1
 ուրբի, Սարեակ 1 ու, Մօտիկ գիւղէն Յարութիւն 10
 ու, Կարմիր գիւղէն Ստ. Պալառ 2 1/2 ու, Սաչին 5 ու,
 Զրաշէնի յԱնահիտ՝ Մասնաճիւղէն 101 ու, Կլորիկի
 յԱրթուն՝ Մասնաճիւղէն՝ Կացին 100 ու, Ասող 20 ու.։
 2որս մարդ 5 ու. 10 կուպ. Սև ջուրից՝ Յ. Մ. Ս. Եղ
 բայրներ 50 ու., 2Եխ գիւղից՝ Կ. Բ. 5 ու., Ս. Բ. 5 ու.,
 Կ. Ս. 15 ու., Ապառաժ գիւղից՝ Յ. Կ. 10 ու., Յ. Ա. 5 ու.,
 Մ. Բ. 5 ու., Յ. Ա. 5 ու., Կ. Ս. 10 ու.։ Հուր քղ-ի
 մասնաճիւղի միջոցաւ Դաշտ քղ-ից՝ Սերգո 5 ու., Ե
 ռանդ 5 ու., Վրէժեան 10 ու., Համբերութիւն 10 ու.,
 Լեռն 2 ու., Խնձոր 2 ու., Արտակ Գնունի 25 ու., Այ
 րո 10 ու., Բուռակ 10 ու.։

ԲԵՐԴ քղ-ի Կոմիտէն ստացած է մինչև 15 յունիս.

Խոսրով 123 1/2 դճ., Սուրէն 73 1/2 դճ., Ապրո 19
 դճ., Երուանդ 19 դճ., Ասլան 9 1/2 դճ., Մուշեղ 66 1/2
 դճ., Կամսար 38 դճ., Մ. Կացին 21 դճ., Օժանդակ խ.
 100 դճ., Գնդակ խ. 80 դճ., Հանթ խ. 74 դճ., Ռուսթ
 խ. 30 1/4 դճ., Արօր գիւղի Մարձու խ. 52 3/4 դճ., Ծով
 գիւղի չորս անձերէ 20 դճ.:

ՊԱՍԵԱՆԵԱՆ Կեդր. Կոմիտէն ստացած է.

Ֆիլիպպէ քղ-էն՝ Շաքէ՝ Կանանց Ընկերութենէն
 251 լև 50 ս, Ա-ի ձեռամբ գաղթական հայաստան-

ցիներէն 100 լև, Պ. Ե...րից 100 ֆր, Արցախ 100 ֆր,
 Մանած 100 ֆր, Ս. 100 ֆր, Վարած 40 ֆր, Ա. Գօշ
 20 ֆր, Ա. Կ. 20 ֆր, Գործարանատէր 20 ֆր, Թ. 10
 ֆր, Դ. 10 լև, Բ. Եղբ. 6 լև:

ՎԱՐՆԱՅԻ Կոմիտէն ստացած է.

Խաչատրեան 2 լև, Յարութիւն 5 լև, Օր. Ալիս 10
 լև, Ս. Վերժին, 10 լև, Առիւծ Հ. 5 լև, Ասողիկ 5 լև,
 Օր. Վարդ 5 լև, Հոգեկառք խ. 8 լև, Թռիչ խ. 6 լև,
 Փետուր խ. 1 լև, Ռուսթ խ. 2 լև, Յասմիկ 2 լև, Ռմի
 1 լև, 2որ խ. 9 լև, Սահակեան խ. 4 լև, Տիգրանուհի
 1 լև, Գրիգոր 1 լև, Առիւծ Հ. 5 լև:

Հումլայի մասնաճիւղէն (յունիս).

Մասնաճիւղի անդամներ 16 լև, Կայծ խ. 5 լև 65
 ս, Ծագում խ. 14 լև, Հուր խ. 6 լև, Արշաւանք խ.
 5 լև, Հրացան խ. 12 լև 10 ս, Վարազ խ. 9 լև, Ա.
 Խանամիրեան 4 լև:

Ասողիկ խ. 14 լև, Բաջունիք խ. 4 լև, Գալուստի
 ձեռքով՝ Պուշկա 10 լև 30 ս, Ռմի 5 լև, Հրանտ 2
 լև, Եփրատ խ. 8 լև, Վ. Տ. Հ. 5 լև, Հ. Մելիքեան 3
 լև, Տ. Վ. 5 լև, Յ. Գ. 1/2 նապ. 1/4 օսմ. ոսկի, Ս.
 Պ. 2 լև, 2որ խ. 9 լև, Դաշտ խ. 10 լև, Սուրենի
 16 լև, Սահակեան 9 լև, Պալքեան 4 լև 50 ս, Յով
 սէփեան 1 լև 50 ս, Էլվանեան 1 լև 50 ս, Ա. Զ. 1
 լև, Ծծան խ. 4 լև, Վ. Տ. Հ. 350 լև 20 ս, Մ. Մ.
 41 լև 20 ս, Փիշիարով 103 լև, Աշխէն խ. 8 լև,
 Վերջալոյս խ. 8 լև, Աղասի 20 լև 50 ս, Զրից 716
 լև 50 ս, Համազասպ 103 լև, Փայլակ 10 լև, Գնէլ
 1 լև, Մանաճիհ 1 լև, Առիւծ յԾ 3 լև, Հայկ 1
 լև, Աշտարակ 1 լև, Ճանաչող 1 լև, Հումլայի Մաս
 նաճիւղից 100 լև, Նորից 20 լև 60 ս.։

ՌՈՒՇՉՈՒՔԻ Կոմիտէն ստացած է.

Արարատ խ. 25 լև, Գաղտնապաճ խ. 35 լև, Նոր
 Աշխարհ խ. 20 լև 50 ս, Պանդուխտ խ. 43 լև,
 Թռնովա քղ-էն Գ. Սարգսեան 10 լև 30 ս, Ճըր
 ճովայէն Սթէֆօ Թ. 3 լև, Յովսէփ Թ. 3 լև, Կրակից
 2 1/2 լև, Կայծակից 2 1/2 լև, Բարսեղ Մ. 1 լև, Ս.
 Օհաննիսեան 2 լև:

ԲՈՒՐԳԱՅԻ Կոմիտէն ստացած է.

Կամսարական խւնէն 49 լև, Եփրատ խւնէն 4 լև,
 Տարօնի խ. 13 լև, Արշալոյս տիկնանց խ. 19 լև 20 ս.
 Վ. Սրճ-ի գանձանակ 19 լև, Մ. Սրճ-ի գանձ. 6 լև,
 Մ. Տ. Յով. Սրճ-ի գանձ. 7 լև, Աթոռ 5 լև, Կ.
 Աբր. 1 լև:

Վ. Բ. Կ. Կ. յԴրօշակ՝ № 8-ի մէջ.

Առիւծէն՝ փոխանակ 2 լևի՝ պէտք է 3 լև լինի:

Ա Ջ Դ

Գրաշարին պատահած մի դժբախտութեան պատ
 ճառով՝ այս համարը անկարող եղանք իր ժամանակին
 լոյս ընծայել:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցեով՝

Rédaction du Droschak, Genève (Suisse)